ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.12.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/315

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.12.2021թ. թիվ 26/26/19648-2021 գրությամբ «Տիկասոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 24.11.2021թ. թիվ Ե/13/3086-21 գրության հիման վրա 01.12.2021թ. թիվ 26/26/19648-2021 գրությամբ նախաձեռնել է «Տիկասոն» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Տիկասոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Տիկասոն» ՍՊԸ-ի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Տիկասոն» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/315 ընթացակարգի շրջանակներում 08.12.2021թ. ժամը 09:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 24.11.2021թ. թիվ Ե/13/3086-21 գրությամբ հայտնել է հետևյալը.

««ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար ռետինատեխնիկական պատրաստվածքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-33/21» ծածկագրով գնման ընթացակարգը, որի արդյունքում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Տիկասոն» ՍՊԸ-ի միջև 2021թ. ապրիլի 12-ին կնքվել է թիվ ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-22/21-01/051 պայմանագիրը՝ 2970000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր գնով:

Համաձայն պայմանագրի հավելված 1-ի (Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց) ռետինատեխնիկական պատրաստվածքների մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրը կնքելու օրվանից 40 օրացույցային օր՝ մինչև 21.05.2021թ.:

Համաձայն Հարկային-հաշիվ ԱՆ09512466830 առ 31.05.2021թ. պայմանագրով սահմանված ժամկետում «Տիկասոն» ՍՊԸ-ի կողմից մատակարարվել են պայմանագրով նախատեսված ռետինատեխնիկական պատրաստվածքների բոլոր հինգ չափաբաժինները:

Ապրանքի մուտքային ստուգման արդյունքում՝ Մուտքային վերահսկողության ԱԿՏ N 05.21-114 առ 24.05.2021թ, հայտնաբերվել և արձանագրվել է, որ թիթեղ ռետինե 1Н-1-МБС-С4-80կգ-ի փոխարեն մատակարարվել է 2Н-1- МБС-С4 (39կգ և 36 կգ) և 75 կգ ընդհանուր քաշով անորակ ռետինե թիթեղ:

Պայմանագրի 2.1.4 կետի պահանջներին համապատասխան, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն հրաժարվել է հանձնված 2Н-1- МБС-С4 75 կգ ապրանքից և ամբողջությամբ հետ է վերադարձրել «Տիկասոն» ՍՊԸ-ին, իսկ մնացած չորս չափաբաժինների ռետինատեխնիկական պատրաստվածքները 2682000 ՀՀ դրամ ընդհանուր գումարով,

Հարկային-հաշվի ճշգրտումից հետո, մուտքագրվել են «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի Պահեստային տնտեսություն:

«Տիկասոն» ՍՊԸ-ին առաջարկվել է պայմանագրով սահմանված ժամկետում փոխարինել անորակ ապրանքը: «Տիկասոն» ՍՊԸ-ն պատճառաբանելով COVID-19 համաճարակը և անկանոն բեռնափոխադրումները՝ նոր խմբաքանակը մատակարարել է 03.11.2021թ.: Սակայն, նոր մատակարարված ապրանքը ևս չի համապատասխանում պայմանագրի տեխնիկական բնութագրին՝ 1Н-1-МБС-С4-ի փոխարեն մատակարարվել է 2Н-1ТМКЦ-С ռետինե թիթեղ՝ մուտքային վերահսկողության ԱԿՏ N 11.21-386 առ 04.11.2021թ.:

19.11.2021թ. «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն միակողմանի լուծել է «Տիկասոն» ՍՊԸ-ի հետ 2021թ. ապրիլի 12-ին կնքած թիվ ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-33/21-01/051 պայմանագիրը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/315 ընթացակարգի շրջանակներում 08.12.2021թ. ժամը 09:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/315 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/315 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «Տիկասոն» ՍՊԸ-ի միջև 12.04.2021թ. կնքվել է թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-33/21-01/051» ծածկագրով «ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար ռետինատեխնիկական պատրաստվածքների մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ռետինատեխնիկական պատրաստվածքներ, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրին կից N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, հետևյալ ապրանքների՝

Թիթեղ ռետինե՝ МБС, 1Н-I-МБС-С-3, հաստ. 3մմ, չափսը՝ 1000x1000մմ, ԳOUS 7338 - 90 կգ

Թիթեղ ռետինե՝ МБС, 1Н-I-МБС-С-4 հաստ. 4մմ, չափսը՝ 1000x1000մմ, ԳOUS 7338 – 90 կգ

Թիթեղ ռետինե՝ МБС, МБС-С-4, հաստությունը՝ 4մմ, չափսը՝ 1000×2000մմ ոչ պակաս, ԳOUS 7338 – 80 կգ

Թիթեղ ռետինե՝ МБС, МБС-С-6, հաստությունը՝ 6մմ, չափսը՝ 1000×2000մմ ոչ պակաս, ԳOUS 7338 – 45 կգ

Խցօղակ՝ ավելցուկային ճնշման կափույրների համար - 1 լրակազմ (ռետինատեխնիկական պատրաստվածք՝ ատոմային էլեկտրակայանների և էներգետիկ ձեռնարկությունների համար):

ռետինե ԿԻԴ-150 Н 2209.00.00.01 20 հատ

ռետինե ԿԻԴ -200 Н 2209.00.00.02 60 հատ

ռետինե ԿԻԴ -250 Н 2209.00.00.03 150 հատ

ռետինե ԿԻԴ -300 Н 2209.00.00.04 30 հատ

ռետինե ԿԻԴ -400 Н 2209.00.00.06 20 հատ,

ռետինե ԿԻԴ -500 Н 2209.00.00.07 40 հատ

մատակարարման ժամկետ է սահմանվել Պայմանագրի կնքման օրվանից 40 օրացուցային օրվա ընթացքում:

3. Պատվիրատուն «Տիկասոն» ՍՊԸ-ին ուղղված 19.11.2021թ. թիվ Ե/13/3054-21 ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

««Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար ռետինատեխնիկական պատրաստվածքների (այսուհետ՝ ապրանք) ձեռքբերման նպատակով ս/թ մարտի 3-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-33/21» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «ՏԻԿԱՍՈՆ» ՍՊԸ-ի միջև 2021թ. ապրիլի 12-ին կնքվել է N ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-33/21-01/051 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) 2 970 000 (երկու միլիոն ինը հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր գնով:

Համաձայն պայմանագրի հավելված N 1-ի (Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց) ռետինատեխնիկական պատրաստվածքների համար մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրը կնքելու օրվանից 40 օրացուցային օր՝ մինչև 21.05.2021թ.:

Համաձայն Հարկային-հաշիվ ԱՆ 09512466830 առ 31.05.2021թ՝ «ՏԻԿԱՍՈՆ» ՍՊԸ-ի կողմից մատակարարվել է Պայմանագրով սահմանված ժամկետում նախատեսված ռետինատեխնիկական պատրաստվածքների բոլոր հինգ չափաբաժինները:

Ապրանքի մուտքային ստուգման արդյունքում (ԱԿՏ N 05.21-114 առ 24.05.2021թ Մուտքային վերահսկողության) հայտնաբերվել և արձանագրվել է, որ Պայմանագրի N 3 չափաբաժնով նախատեսված 80կգ թիթեղ ռետինե 1Н-1-МБС-С4-ի փոխարեն մատակարարվել է 75 կգ (39կգ և 36 կգ) ընդհանուր քաշով անորակ և պիտանելիության ժամկետանց 2Н-1-МБС-С4 ռետինե թիթեղ, որը հետ է վերադարձվել Ձեզ: Միաժամանակ Ձեզ առաջարկվել է, թույլատրելի ժամկետում, փոխարինել այն նոր և պիտանելի ռետինե թիթեղով:

Սույն թվականի նոյեմբերի 3-ին Ձեր կողմից մատակարարված 80 կգ 1Н-1-МБС-С4 (Հարկային-հաշիվ ԱՆ 0319706374 առ 03.11.2021թ) ռետինե թիթեղը նույնպես չի համապատասխանում Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին (ԱԿՏ N 11.21-386 առ 03.11.2021թ Մուտքային վերահսկողության), որի վերաբերյալ Ձեզ տեղեկացվել է:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ Պայմանագրի 2.3.7 կետի համաձայն միակողմանի լուծում է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «ՏԻԿԱՍՈՆ» ՍՊԸ-ի միջև 2021թ. ապրիլի 12-ին կնքված N ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-33/21-01/051 պայմանագիրը և Ձեր կազմակերպության նկատմամբ կկիրառվի նաև Պայմանագրի 6-րդ կետով սահմանված տույժերը և տուգանքները, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն Որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 45-րդ կետի պահանջները»:

4. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 22.11.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 01.12.2021թ. թիվ 26/26/19648-2021

գրությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 24.11.2021թ. թիվ Ε/13/3086-21 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «Տիկասոն» ՍՊԸ-ի միջև 12.04.2021թ. կնքվել է թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-33/21-01/051» ծածկագրով «ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար ռետինատեխնիկական պատրաստվածքների մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ռետինատեխնիկական պատրաստվածքներ, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրին կից N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, հետևյալ ապրանքների՝

Թիթեղ ռետինե՝ МБС, 1Н-I-МБС-С-3, հաստ. 3մմ, չափը՝ 1000x1000մմ, ԳOUS 7338 - 90 կգ

Թիթեղ ռետինե՝ МБС, 1Н-I-МБС-С-4 հաստ. 4մմ, չափը՝ 1000x1000մմ, ԳOUS 7338 – 90 կգ

Թիթեղ ռետինե՝ МБС, МБС-С-4, հաստությունը՝ 4մմ, չափը՝ 1000×2000մմ ոչ պակաս, ԳOUS 7338 – 80 կգ

Թիթեղ ռետինե՝ МБС, МБС-С-6, հաստությունը՝ 6մմ, չափը՝ 1000×2000մմ ոչ պակաս, ԳOUS 7338 – 45 կգ

Խցօղակ՝ ավելցուկային ճնշման կափույրների համար - 1 լրակազմ (ռետինատեխնիկական պատրաստվածք՝ ատոմային էլեկտրակայանների և էներգետիկ ձեռնարկությունների համար):

ռետինե ԿԻԴ-150 Н 2209.00.00.01 20 հատ

ռետինե ԿԻԴ -200 Н 2209.00.00.02 60 հատ

ռետինե ԿԻԴ -250 Н 2209.00.00.03 150 հատ

ռետինե ԿԻԴ -300 Н 2209.00.00.04 30 հատ

ռետինե ԿԻԴ -400 Н 2209.00.00.06 20 հատ,

ռետինե ԿԻԴ -500 Н 2209.00.00.07 40 հատ

մատակարարման ժամկետ է սահմանվել Պայմանագրի կնքման օրվանից 40 օրացուցային օրվա ընթացքում:

Պատվիրատուն «Տիկասոն» ՍՊԸ-ին ուղղված 19.11.2021թ. թիվ Ε/13/3054-21 ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

««Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար ռետինատեխնիկական պատրաստվածքների (այսուհետ՝ ապրանք) ձեռքբերման նպատակով ս/թ մարտի 3-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-33/21» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «ՏԻԿԱՍՈՆ» ՍՊԸ-ի միջև 2021թ. ապրիլի 12-ին կնքվել է N ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-33/21-01/051 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) 2 970 000 (երկու միլիոն ինը հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր գնով:

Համաձայն պայմանագրի հավելված N 1-ի (Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց) ռետինատեխնիկական պատրաստվածքների համար մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրը կնքելու օրվանից 40 օրացուցային օր՝ մինչև 21.05.2021թ.:

Համաձայն Հարկային-հաշիվ ԱՆ 09512466830 առ 31.05.2021թ' «ՏԻԿԱՍՈՆ» ՍՊԸ-ի կողմից մատակարարվել է Պայմանագրով սահմանված ժամկետում նախատեսված ռետինատեխնիկական պատրաստվածքների բոլոր հինգ չափաբաժինները:

Ապրանքի մուտքային ստուգման արդյունքում (ԱԿՏ N 05.21-114 առ 24.05.2021թ Մուտքային վերահսկողության) հայտնաբերվել և արձանագրվել է, որ Պայմանագրի N 3 չափաբաժնով նախատեսված 80կգ թիթեղ ռետինե 1Н-1-МБС-С4-ի փոխարեն մատակարարվել է 75 կգ (39կգ և 36 կգ) ընդհանուր քաշով անորակ և պիտանելիության ժամկետանց 2Н-1-МБС-С4 ռետինե թիթեղ, որը հետ է վերդարձվել Ձեզ: Միաժամանակ Ձեզ առաջարկվել է, թույլատրելի ժամկետում, փոխարինել այն նոր և պիտանելի ռետինե թիթեղով:

Սույն թվականի նոյեմբերի 3-ին Ձեր կողմից մատակարարված 80 կգ 1Н-1-МБС-С4 (Հարկային-հաշիվ ԱՆ 0319706374 առ 03.11.2021թ) ռետինե թիթեղը նույնպես չի համապատասխանում Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին (ԱԿՏ N 11.21-386 առ 03.11.2021թ Մուտքային վերահսկողության), որի վերաբերյալ Ձեզ տեղեկացվել է:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ Պայմանագրի 2.3.7 կետի համաձայն միակողմանի լուծում է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «ՏԻԿԱՍՈՆ» ՍՊԸ-ի միջև 2021թ. ապրիլի 12-ին կնքված N ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-33/21-01/051 պայմանագիրը և Ձեր կազմակերպության նկատմամբ կկիրառվի նաև Պայմանագրի 6-րդ կետով սահմանված տույժերը և

տուգանքները, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն Որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 45-րդ կետի պահանջները»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 22.11.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի:

Պայմանագրի 2.2.4 ենթակետով սահմանված է՝ ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

Պայմանագրի 5.3 ենթակետի համաձայն՝ եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված

միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 108-րդ կետի համաձայն՝ Պայմանագրի կատարման նկատմամբ նախնական հսկողությունն իրականացնում է պատասխանատու ստորաբաժանումը: ***Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և գնման պայմանագիր կնքած անձի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ,*** որի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը:

Կարգի 109-րդ կետի համաձայն՝ արձանագրությունն ստորագրվում է, եթե առկա է պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցչի (ներկայացուցիչների) գրավոր դրական եզրակացությունը: Սույն կետում նշված անձը պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ տալիս է դրական եզրակացություն, եթե մատակարարված ապրանքը, կատարված աշխատանքը կամ մատուցված ծառայությունը համապատասխանում են պայմանագրի պայմաններին: Պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետների խախտման դեպքերում տրվում է դրական եզրակացություն, եթե պատվիրատուի կողմից չի ընդունվում պայմանագիրը լուծելու մասին որոշում: ***Բացասական եզրակացություն տալու դեպքում պատասխանատու ստորաբաժանումը երկու աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին գրավոր հայտնում է պատվիրատուի ղեկավարին՝ ներկայացնելով առաջարկություններ պայմանագրի կողմի նկատմամբ ձեռնարկվելիք միջոցների վերաբերյալ***: Նման դեպքում պատվիրատուի ղեկավարը ներկայացված առաջարկություններին համապատասխան ձեռնարկում է միջոցներ՝ հարցի կարգավորման համար: ՀՀ պաշտպանության նախարարության պատվերներով իրականացվող տեղական արտադրության ռազմական նշանակության ապրանքի և (կամ) գույքի համար, որոնց ընդունումը (նախատեսված է) իրականացվել է պատվիրատուի ներկայացուցչության միջոցով, արձանագրության ստորագրման համար հիմք է ընդունվում ներկայացուցչության կողմից այդ ապրանքի և (կամ) գույքի համար տրված դրական եզրակացությունը:

Կարգի 110-րդ կետի համաձայն՝ Էլեկտրոնային եղանակով իրականացվող գնումների դեպքում պայմանագրի կատարման արդյունքի ընդունման հետ կապված սույն բաժնով սահմանված գործողություններն իրականացվում են էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով, հաշվի առնելով հետևյալ առանձնահատկությունները՝

1) պայմանագրի կամ դրա մի մասի ընդունման նպատակով պայմանագիր կնքած անձը դրանով սահմանված ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով պատվիրատուի ղեկավարին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը: ***Պատվիրատուի ղեկավարը հանձնման-ընդունման արձանագրությունն ստանալուն հաջորդող աշխատանքային օրը, նույն համակարգի միջոցով տրամադրում է պատասխանատու ստորաբաժանմանը***.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված հանձնման-ընդունման արձանագրությունն ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանման՝ ***գնման հայտը նախագծած ներկայացուցիչն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով պատասխանատու ստորաբաժանման ղեկավարին է տրամադրում էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ եզրակացություն***.

3) ***եթե պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրվել է՝***

բ. բացասական եզրակացություն, ապա եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը եզրակացությունը և իր կողմից չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով տրամադրում է պատվիրատուի ղեկավարին, որոնք վերջինս մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է պայմանագիր կնքած անձին:

Կարգի 111-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 109-րդ կետով նախատեսված գրավոր եզրակացության ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը:

Այսպիսով՝ վերը շարադրված իրավական կարգավորումների վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ ***Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և գնման պայմանագիր կնքած անձի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ.*** Պատվիրատուի ղեկավարը հանձնման-ընդունման արձանագրությունն ստանալուն հաջորդող աշխատանքային օրը, համակարգի միջոցով տրամադրում է

պատասխանատու ստորաբաժանմանը, ***որից հետո պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցիչը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարին է տրամադրում էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ եզրակացություն, իսկ եթե վերջինիս կողմից տրվել է բացասական եզրակացություն, ապա եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը եզրակացությունը և իր կողմից չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով տրամադրում է պատվիրատուի ղեկավարին, որոնք վերջինս մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է պայմանագիր կնքած անձին, մինչդեռ՝ Պատվիրատուի կողմից տրամադրված փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ վերը նշված փաստաթղթերը, այն է՝ հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը, ինչպես նաև պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ ակտը (Հավելված 3.1) առկա չեն, ուստիև նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել «Տիկասոն» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրի 2.1.7.1 կետի ենթակետի խախտման փաստը և, որպես վերոգրյալի հետևանք՝ Պայմանագրի միակողմանի լուծման իրավաչափությունը:***

Այսպիսով՝ վերը նշված փաստական հանգամանքներով պայմանավորված՝ գտնում եմ, որ հնարավոր չէ արձանագրել «Տիկասոն» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտումը, այն է՝ Պայմանագրով ստանձնած պարտավորությունը չկատարելը, հետևաբար գտնում եմ, որ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.12.2021թ. թիվ 26/26/19648-2021 գրությամբ «Տիկասոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**